



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՐԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Քարաբերդ համայնք, 6-80-10.

Լոռու մարզպետ՝ պ. -ն

Ա. Ղուկասյանին

Հարգելի պարոն Ղուկասյան

Կից ներկայացնում ենք Քարաբերդ համայնքի ավագանու թիվ 4-Ն և համայնքի
ղեկավարի թիվ 4 որոշումները:

Առդիր 2 թերթ:

Քարաբերդ համայնքի ղեկավար



Յուրիկ Շավելյան

27 փետրվարի 2019թ.

գ. Քարաբերդ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՐԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Քարաբերդ համայնք, 6-80-10.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 25 » փետրվարի 2019 թվականի N 4-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒԻ ՄԱՐԶԻ ՔԱՐԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ, ԿԱՊԻ, ՏՐԱՆՍՊՈՐՏԻ և ԿՈՄՈՒՆԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԿԱՊԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ 0.02 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ՕՏԱՐՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի դրույթներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Քարաբերդ համայնքի ավագանին

Որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Քարաբերդ համայնքի վարչական սահմաններում, համայնքային սեփականություն հանդիսացող Լոռու մարզ, համայնք Քարաբերդ « Գյուլուլի յալ 2» հողամաս հասցեում գտնվող, 06-108-0124-0005 կադաստրային ծածկագրով էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերից, բջջային կապի կայանի շինարարության նպատակով, աճուրդ-վաճառքի կարգով օտարել երկու հարյուր /200/քառակուսի մետր հողամաս՝ մեկնարկային գին սահմանելով՝ 100 000 ՀՀ դրամ:
2. Լոտի մասնակցության վճարը սահմանել 1000 ՀՀ դրամ, նախավճարի և քայլի չափը մեկնարկային գնի 5 տոկոսի չափով:
3. Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Ավագանու անդամներ՝

	Կողմ (4)	Դեմ (0)	Ձեռնպահ(0)
1. Հասմիկ Շավելյան	<i>[Signature]</i>		
2. Ժենյա Կոստանյան	<i>[Signature]</i>		
3. Արման Շավելյան	<i>[Signature]</i>		
4. Գագիկ Շավելյան	<i>[Signature]</i>		





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՐԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Քարաբերդ համայնք, 6-80-10.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 22 » փետրվարի 2019 թվականի N 4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՐՈՒ ՄԱՐԶԻ ՔԱՐԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՆՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ 2019Թ. –Ի ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, « Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015թ. հունվարի 22-ի N 46-Ն որոշման հավելված 1-ի 16-րդ կետի 2-րդ ենթակետով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի 18.01.2018թ.-ի N 1/17.1/313-19 գրությունը և Լոռու մարզպետի 23.01.2018թ. թիվ 01/107.4/000372-2019 գրությունը:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Քարաբերդ համայնքում արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2019թ.-ի հիմնական միջոցառումների պլանը՝ համաձայն հավելվածի:
2. Մինչև 2019թ.ի դեկտեմբերի 10-ը Արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Լոռու մարզային փրկարարական վարչություն ներկայացնել տեղեկատվություն սույն որոշման համաձայն իրականացված միջոցառումների վերաբերյալ:

Համայնքի ղեկավար

Յուրիկ. Շավեյան



22 փետրվարի 2019թ.
զ Քարաբերդ